ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 291
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքը (Լիճք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Մարտունի համայնքի (Լիճք բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքը (Լիճք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը*՝

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-039-0219-0007, 05-039-0219-0013 կադաստրային ծածկագրերով 0.2 հա, 0.16105 հա մակերեսներով հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված հողեր	05-039-0219-0007, 05-039-0219-0013 կադաստրային ծածկագրերով 0.2 հա, 0.16105 հա մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունների կողմից ներկայացված պայմանները (կցվում են):

4. ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Լիճք բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, «29» «օգոստոսի» 2025 թ.